# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«01» նոյեմբերի 2016 թվականի N 183

Արմավիրի մարզպետ պարոն
Աշոտ Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Համաձայն Ձեր 17.03.2009թ. թիվ 600 գրության Ձեզ է ներկայացվում 2016 թվականի հոկտեմբեր ամսին Հացիկի գյուղական համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում ընդունվել է 5 որոշում, արձակվել է 1կարգադրություն:

Առդիր 9 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա, Եղիազարյան

01.11.2016թ. գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» հոկտեմբերի 2016 թվականի N 6

## ԱԶԱՏ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածով,ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշումը և ամենամյա արձակուրդների տրամադրման 2016 թվականի գրաֆիկը`

**Կարգադրում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազատ Միլիտոնյանին 2016 թվականի հոկտեմբերի 3-ից տրամադրել 2016 թվականի ամենամյա արձակուրդը` նվազագույնը 20 աշխատանքային օր և լրացուցիչ չորս աշխատանքային օր` ընդամենը 24 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի նոյեմբերի 4-ից:
3. Աշխատակազմի քարտուղար Ա.Միլիտոնյանի պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի գլխավոր մասնագետ Կ.Պողոսյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

03.10.2016թ.
գ.Հացիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«19» հոկտեմբերի 2016 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 49

## ՊԱՇՏՈՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի հինգերորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 190-Ա որոշումը.

**Որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու լիազորությունները ստանձնելու օր համարել 2016 թվականի նոյեմբերի 7-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ավոյան Արգամ Ալբերտի
Արշակյան Համլետ Նշանի
Թովմասյան Ռոբերտ Բաբկենի
Իսկանդարյան Ջիվան Միհրանի
Կարապետյան Սերգո Մարտունի
Մարտիրոսյան Պերճ Կարապետի
Սարգսյան Ստեփան Գեղամի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 19.10. 2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«19» հոկտեմբերի 2016 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 48

ՊԱՇՏՈՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի հինգերորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 157-Ա որոշումը.

Որոշում եմ`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու օր համարել 2016 թվականի նոյեմբերի 7-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 19.10. 2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«14» նոյեմբերի 2016 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 47

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲԻ ԽԱՄԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սարգիս Խամիսյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 16-րդ փողոց 2-րդ փակուղի 1 տուն հասցեում գտնվող բնակավայրի, 3000 մ$^2$ տնամերձ օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Սարգիս Խամիսյանի N187 դիմումը

### Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 16-րդ փողոց 2-րդ փակուղի 1 տուն հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Սարգիս Հակոբի Խամիսյանի (ծնված 1950 թվականին), Սաթենիկ Խաչիկի Եգնիկյանի (ծնված 1955 թվականին), Ծովինար Սարգսի Խամիսյանի (ծնված 1978 թվականին), Արթուր Սարգսի Խամիսյանի (ծնված 1981 թվականին) և Հայկ Սարգսի Խամիսյանի (ծնված 1985 թվականին) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 3000 քառ. մ օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 105.00 քառ. մ (կառուցված 1988թ.), թիվ 2 ծածկոցի՝ 23.7 քառ. մ (կառուցված 1990թ.), թիվ 3 ավտոտնակի՝ 24.80

քառ. մ (կառուցված 1988թ.), թիվ 4 մառանի` 21.60 քառ. մ (կառուցված 1988թ.), թիվ 5 թոնրատան` 10.40 քառ. մ (կառուցված 1988թ.) նկատմամբ:

2. 2003 թվականին կառուցված 20.4 քառ. մ մակերեսով թիվ 1 բաց պատշգամբը, 2002 թվականին կառուցված 10.4 քառ. մ թիվ 6 ծածկոցը և 2004 թվականին կառուցված 56.10 քառ. մ անասնաշենքը համարել ինքնակամ:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սարգիս Հակոբի Խամիսյանի (ծնված 1950 թվականին), Սաթենիկ Խաչիկի Եզնիկյանի (ծնված 1955 թվականին), Ծովինար Սարգսի Խամիսյանի (ծնված 1978 թվականին), Արթուր Սարգսի Խամիսյանի (ծնված 1981 թվականին) և Հայկ Սարգսի Խամիսյանի (ծնված 1985 թվականին) գույքային իրավունքները` ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. 3000 քառ. մ հողամասին կից 204 քառ. մետր ավել տարածքը, որը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Սարգիս Հակոբի Խամիսյանին:

5. Նախկին 10.10.2016թ. N45 որոշումը չեղյալ համարել:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 14.10. 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«10» հոկտեմբերի 2016 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 46

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը և քաղաքացի Սարգիս Խամիսյանի 2016 թվականի հոկտեմբերի N187 դիմումը

**Որոշում եմ**

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Սարգիս Հակոբի Խամիսյանին պատկանող բնակելի տանը (ծածկագիր 04-058-045-010) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 2 փակուղի 1 տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի աշխատակազմի «Արմավիրի» սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ
10.10.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«10» հոկտեմբերի 2016 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 45

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲԻ ԽԱՄԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սարգիս Խամիսյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 16-րդ փողոց 2-րդ փակուղի 1 տուն հասցեում գտնվող բնակավայրի, 3000 $մ^2$ տնամերձ օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Սարգիս Խամիսյանի N187 դիմումը

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 16-րդ փողոց 2-րդ փակուղի 1 տուն հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Սարգիս Հակոբի Խամիսյանի (ծնված 1950 թվականին) և Սաթենիկ Խաչիկի Եգնիկյանի (ծնված 1955 թվականին) գույքային իրավունքները` ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 3000 քառ. մ օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան` 105.00 քառ. մ (կառուցված 1988թ.), թիվ 2 ծածկոցի` 23.7 քառ. մ (կառուցված 1990թ.), թիվ 3 ավտոտնակի` 24.80 քառ. մ (կառուցված 1988թ.), թիվ 4 մառանի` 21.60 քառ. մ (կառուցված 1988թ.), թիվ 5 թոնրատան` 10.40 քառ. մ (կառուցված 1988թ.) նկատմամբ:

2. 2003 թվականին կառուցված 20.4 քառ. մ մակերեսով թիվ 1 բաց պատշգամբը, 2002 թվականին կառուցված 10.4 քառ. մ թիվ 6 ծածկոցը և 2004 թվականին կառուցված 56.10 քառ. մ անասնաշենքը համարել ինքնակամ:
3. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սարգիս Հակոբի Խամիսյանի (ծնված 1950 թվականին) և Սաթենիկ Խաչիկի Եզնիկյանի (ծնված 1955 թվականին) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. 3000 քառ. մ հողամասին կից 204 քառ. մետր ավել տարածքը, որը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Սարգիս Հակոբի Խամիսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 10.10. 2016թ.